Մահապատժի դեմ պայքարի եվրոպական և համաշխարհային օր, 10 հոկտեմբերի 2022 թ: Եվրոպական միության Գերագույն ներկայացուցչի և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի համատեղ հայտարարություն

Մահապատժի դեմ պայքարի եվրոպական և համաշխարհային օրվա կապակցությամբ Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը վերահաստատում են մահապատժին իրենց անվերապահ դեմ լինելը բոլոր ժամանակներում, բոլոր վայրերում և բոլոր հանգամանքներում:

Այս տարի լրանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ)՝ մահապատժի վերացմանը բոլոր հանգամանքներում վերաբերող 13-րդ Արձանագրության քսաներրորդ տարելիցը :

Մենք ողջունում ենք Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին (ներառյալ՝ ԵՄ բոլոր անդամ պետությունները), որոնք վերացրել են մահապատիժը բոլոր հանգամանքներում, և կոչ ենք անում Եվրոպայի խորհրդի՝ սույն Արձանագրությանը դեռ չմիացած վերջին երկու անդամ պետություններին՝ Հայաստանին և Ադրբեջանին, վավերացնել 13-րդ Արձանագրությունն առանց հապաղելու:

Մահապատիժ կիրառող պետությունների թվի կայուն նվազումը հաստատում է այս դաժան, անմարդկային և անարդյունավետ պատժից հրաժարվելու համաշխարհային միտումը: 2021 թվականին ՄԱԿ-ի անդամ՝ փոքրամասնություն կազմող ընդամենը 18 երկրներում (9%) է կիրառվել մահապատիժ: Մենք կոչ ենք անում այդ պետություններին, որպես մահապատժի վերացման առաջին քայլ, սահմանել մահապատիժ կիրառելու մորատորիում :

Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը խստորեն դատապարտում են Ուկրաինայի օկուպացված Դոնեցկ քաղաքում վերջերս հրապարակված մահապատժի դատավճիռները, շեշտում են, որ այս դատավճիռները անհամատեղելի են ինչպես մարդու իրավունքների եվրոպական իրավունքի, այնպես էլ միջազգային իրավունքի հետ, ներառյալ ժնևի կոնվենցիաները, և գոհունակությամբ ողջունում են դատապարտյալների ազատ արձակումը: Միևնույն ժամանակ, մենք դատապարտում ենք Բելառուսի քրեական օրենսգրքում քաղաքական դրդապատճառներով կատարված փոփոխությունը, համաձայն որի մահապատիժը տարածվում է «ահաբեկչական գործողությունների փորձի» վրա, որը որպես վերջնանպատակ միտված է թիրախավորելու քաղաքական այլախոհներին. մենք իշխանություններին կոչ ենք անում չեղարկել այս որոշումը: Մենք նաև կոչ ենք անում Սինգապուրին, Իրանին, Սաուդյան Արաբիային և այլ երկրներին, որտեղ վերջերս աճել է մահապատիժների թիվը, միանալ համաշխարհային միտումին և հրաժարվել այս անմարդկային պատժի կիրառումից:

Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը բարձր են գնահատում Ղազախստանի կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրության վավերացումը, որի նպատակն է վերացնել մահապատիժն ամբողջ աշխարհում:

Մենք նաև ողջունում ենք Պապուա Նոր Գվինեային, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությանը և Հասարակածային Գվինեային այս տարի մահապատիժը վերացնելու համար:

Մահապատժին բնորոշ է անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքը: Մահապատժի դատապարտումը նպաստում է մարդու ֆիզիկական և հոգեբանական առողջության երկարաժամկետ վատթարացմանը: Մահապատժին սպասելու հոգեկան տագնապը և մահապատիժը կիրառելու դաժան մեթոդները հակասում են ՄԻԵԿ 3-րդ հոդվածին, ինչը վաղուց ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով:

Վերջապես, Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը խրախուսում են բոլոր պետություններին՝ միանալուԽոշտանգումներից զերծ առևտրի համաշխարհային դաշինքին, որը մեկնարկել է 2017 թվականին և ներկայումս ներառում է 62 պետություն, որոնք պարտավորվել են սահմանափակելու խոշտանգումների և մահապատժի կիրառման համար օգտագործվող ապրանքների առևտուրը:

Մահապատիժն անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է, որը հակասում է մարդու արժանապատվությանը: Այն չի ծառայում որպես հանցագործության կանխարգելիչ միջոց: Որևէ իրավական համակարգ ապահովագրված չէ դատական սխալներից, որոնք կարող են հանգեցնել անմեղ մարդկանց մահվան: Մենք շարունակելու ենք պայքարել այնքան ժամանակ, քանի դեռ մահապատժի կիրառումը ամբողջությամբ չի վերացել: